

ԻՍԼԱՄԱՑՎԱԾ ՀԱՅԵՐԻՆ ԵՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ
ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ

2013 թ. նոյեմբերի 2-4-ը Ստամբուլի Բողազիչի (Բոսֆորի) նշանավոր համալսարանում տեղի ունեցավ «Իսլամաց(վ)ած հայերի մասին» թեմայով գիտաժողով, որը կազմակերպել էին «Հրանտ Դինք» հիմնադրամը, Մալաթիացի բարեգործասեր հայոց մշակութային և համագործակցական միությունն ու Բողազիչի համալսարանը (նախկին Ռոբերտ քոլեջ), որի 150 ամյակը լրացավ այս տարի:

Գիտաժողովում իրենց զեկուցումները կարդացին ԱՄՆ-ի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Թուրքիայի և Հայաստանի 26 գիտնականներ, որոնց բազմաթիվ դիմողներից ընտրել էր տարբեր երկրների համալսարանների գիտնականներից (այդ թվում՝ սփյուռքահայ) կազմված 13 հոգանոց հանձնախումբը: Հայաստանից ընտրվել էին 4 գիտնականներ՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտից Հրանուշ Խառատյանը և Սերգեյ Վարդանյանը, ԵՊՀ-ից՝ Գայանե Չոբանյանը, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտից՝ Աննա Ալեքսանյանը:

Գիտաժողովի 3 օրերին Բողազիչի համալսարանի ընդարձակ դահլիճը լեկ-լեցուն էր տեղացի, նաև տարբեր երկրներից ժամանած հայ և օտարազգի ունկնդիրներով ու գիտնականներով:

Գիտաժողովի մասնակիցներին ողջույնի խոսք ասացին Հրանտ Դինքի այրին՝ Ռաբել Դինքը, Բողազիչի համալսարանի նախագահ, տիկին Գյուլայ Բարբարոսօղլուն, Մալաթիացի բարեգործասեր հայոց մշակութային և համագործակցական միության նախագահ Խոսրով (Հոսրոֆ) Քյուլեթավիթօղլուն, «Հրանտ Դինք. հիմնադրամի և Ստամբուլի Սաբանջը համալսարանի աշխատակցուհի Այշե Գյուլ Ալթընայը: Այնուհետև բացման խոսք ասացին հայերիս քաջածանոթ փաստաբան և գրող Ֆեթիհյե Չեթինը, Նեբահաթ Աքքօչը և Սիբել Ասնան:

Պիտի նշեմ, որ առաջին անգամ էր, որ Թուրքիայում անցկացվող գիտաժողովի պաշտոնական լեզուներն էին ոչ միայն թուրքերենը և անգլերենը, այլև հայերենը, որոնցով հնչած զեկուցումների համաժամանակյա թարգմանությունները ականջակալների միջոցով հասու էին դառնում ներկաներին:

Առաջինն ԱՄՆ-ից, ուղիղ կապով ելույթ ունեցավ Զեյնեփ Թյուրքյըլմազը, որի թեման էր՝ «Կրոնափոխության մասին հետազոտություններ. անդրադարձ օսմանյան և հանրապետության պատմությանն ու

պատմագրությանը»: Հաջորդ էլույթ ունեցողի՝ Ավետիս Հաճյանի թեման էր «Անատոլիայի հայերի և մերօրյա մահմեդականացված հայերի մասին Շնորհք պատրիարքի առաջարկած չորս դասակարգումը»: Այժե Գյուլ Այթընայի զեկուցման վերնագիրն էր՝ «Մահմեդականացված հայերի շուրջ պատմական և պատմագիտական լռության և նոր հիշատակում ազգային պատկանելության, ազգի և սեռի շուրջ»:

Հաջորդը տողերիս հեղինակի էլույթն էր՝ «Մահմեդականացված համընդհանրապես՝ զոհեր և ակնատեսներ»: Բնական է, որ հուզվում էի, քանզի, երևի իր 150-ամյա պատմության ընթացքում, համալսարանի պատերից ներս առաջին անգամ պիտի հնչեր հայերեն զեկուցում, այն էլ՝ բռնի կրոնափոխության և ցեղասպանության մասին: Բնչպես նշեցի, էլույթները զուգահեռաբար թարգմանվում էին անգլերեն և թուրքերեն: Ինձանից բացի՝ հայերեն էլույթ ունեցան նաև Հրանուշ Խառատյանը, Գայանե Չոբանյանը և Գերմանիայից՝ Իշխան Զիֆթճյանը: Ամբողջ զիտածողովի ընթացքում հայերենից թուրքերեն և թուրքերենից հայերեն բարյացակամորեն թարգմանում էր «Ակոս. թերթի հայերեն բաժնի խմբագիր Բագրատ Էսդուգյանը: Բսկ մեր՝ հայաստանցիներին, խմբին Ստամբուլում գտնվելու բոլոր 7 օրերին ուղեկցում էր Երևանի պետհամալսարանի թյուրքագիտական բաժնի շրջանավարտ, «Հրանտ Դինք» հիմնադրամի կամավոր աշխատակցուհի Վարդուհի Բայանը:

Եվ այսպես՝ երևի առաջին անգամ, Ստամբուլի նշանավոր Բողազիչի համալսարանի ամբիոնից կարդացվեց հայերեն զեկուցում, էկրանին ցուցադրվեցին թեմային առնչվող 44 լուսանկարներ. վերջում Համընդհանրաբար հնչեց Բողազիչի համալսարանի շրջանավարտ, ծագումով Ռիզեի համընցի, երգչուհի Այշենուր Քոլիվարի Ճորոխի ողբը երգը: Ե՛վ լուսանկարները, և՛ երգը շատերին հուզեցին ու հետաքրքրեցին, ընդմիջումների ընթացքում նրանք մոտենում էին ու խնդրում, որ համացանցով իրենց ուղարկեմ լուսանկարներն ու ձայնագրությունը, ինչն արեցի Երևան վերադառնալուց հետո:

Որպեսզի ընթերցողները հնարավորինս լավ պատկերացում կազմեն գիտածողովի մասին, անհրաժեշտ էմ համարում ներկայացնել բոլոր 26 զեկուցումները՝ հեղինակներին ու վերնագրերը: Եվ այսպես, ըստ հերթականության, հաջորդաբար էլույթ ունեցան Սերափ Դեմիրը՝ Զանգվածային կրոնափոխությունը Համընդում, Խոփայի գավառի համընցի, ստամբուլաբնակ Մահիր Էօզքանը՝ «Համընդական ինքնություն, մշակույթ, լեզու և կրոն», Ուդուր Բահադրը Բայրաքթարը՝ Առևանգումը, ամուսնությունը և մահմեդականացումը թանգիմաթի ժամանակաշրջանում, Սելիմ Դերինգիլը (ներկա չէր, զեկուցումն ընթերցվեց)՝ «Զանգվածային կրոնափոխությունը 1894–1897 թթ. համիդյան կոտորածների ընթացքում», Թաներ Աքչամը՝ «Ասիմիլացիան որ-

պես հայերի կրոնափոխության կառուցվածքային բաղադրիչ», Արմեն Մարտուրյանը՝ «Վերապրածի չպատմված պատմություն. «մահմեդականացված» հայ ընտանիք Մերզիֆոնում (1915–1919 թթ.)», Աննա Ալեքսանյանը՝ «Ռուբեն Հերյան. Հայոց ցեղասպանությունից հետո հայ կանանց և երեխաների ազատարար», Գայանե Չոբանյանը՝ «Արաբացած հայերի հարցը»:

Նոյեմբերի 3-ին զեկուցողները էլույթ ունեցան հետևյալ հերթակառույցում՝ Վահե Թաշճյան՝ «Խառնամուսնություն, մարմնավաճառություն, գոյատևում. վերապրած հայ կանանց վերաինտեգրումը հետոսմանյան հայ համայնքին», Արդա Մելքոնյան՝ «Սեռը և գոյատևման տարբերակները Հայոց ցեղասպանության ընթացքում», Դորիս Մելքոնյան՝ «Մահմեդական կենցաղ. ցեղասպանության ընթացքում հայ երեխաների փորձը», Իշխան Չիֆթճյան՝ «Մահմեդականացումը որպես գոյատևման կամ անհետացման միջոց. 1915 թ. ցեղասպանության ընթացքում հայերի մահմեդականացման տեսություն և պրակտիկա», Հիլմար Կախեր՝ «Հայ աքսորյալների ասիմիլացիան 1915–1917 թթ.», Ուենդի Համելինք՝ «Սասունի հայերի երաժշտական հիշողությունը», Ջաֆեր Սարրբայա՝ «Միայն լոխումն է մնում հուշ. սևծովյան շրջանի մահմեդականացված հայերը և մի համի մնայուն պատմություն», Նևին Յըլդըզ Թահինջիօղլու՝ «Գոյության պատմություն. ի՞նչ է մնում Մառաշից», Ռուբինա Փիրումյան (ներկա չէր, զեկուցումն ընթերցվեց)՝ «Մահմեդական հայեր, պարադոքս», Ադնան Չելիք՝ «Մահմեդականացված հայ ընտանիքների գոյատևման մարտավարությունը, Դիարբեքիր-Փասուրի (Քուլփ) դեպքը», Դավութ Յեշիլմեն՝ «Հայերի ընկալումը ժամանակակից քրդական վեպերում և հավաքական հիշողության ներկայացում», Ռամազան Արաս՝ «Միսիլմենի մահմեդական քրդերի շրջանում մահմեդական հայերի ընկալման վերլուծությունը», Ումիթ Քուրթ և Սուրադ Ուչաներ՝ «Բեսնից 36 «մահմեդական» հայ երեխայի պատմությունը», Նեզահաթ Գյունդողան և Քազըմ Գյունդողան՝ «Հայերը 1937–38 թթ. Դերսիմի Թերթեղեում» Հրանուշ Խառատյան՝ ««Ես Դերսիմից եմ». ինքնությունից խուսափելը Դերսիմի բնակչության շրջանում և Դերսիմի ալևի դարձած հայերը», Գյոքչեն Բ. Դինչ՝ «Պաշտպանված, բայց խտրականության ենթարկված Դերսիմի հայեր»:

Նոյեմբերի 4-ին զեկուցողները էլույթ ունեցան հետևյալ թեմաներով՝ Հելին Անահիտը՝ «Հիշողության գետերը, հավաքական հիշողության և մշակութային վերափոխման ուսումնասիրություն Թուրքիայի մահմեդականացված հայերի «ձայնի» միջոցով», Ալիս վոն Բիբերշտեյնը՝ ««Ես»-ը որպես դատարկություն», Լորիս Ռիթերը՝ «Վերականգնելով ինքնությունը. ընտանիք կառույցի կարևորությունը ծպտյալ և մահմեդականացած հայերի շրջանում», Անուշ Սյունին՝ «Տարբերության հետևանք, մահմեդականացված հայերի նախադեպը»:

Պետք է նշեմ, որ դահլիճը շատ անմիջականորեն էր արձագանքում ելույթներին, շատերին հնարավորություն ընձեռվեց հարցեր տալ զեկուցողներին, ինչը երբեմն վերածվում էր սրտաբույս խոսքի, մարդիկ բարձրաձայնում էին տարիներ շարունակ սրտում ու մտքում թաքցրածը, պատմում էին իրենց պապերի ու տատերի, իրենց ընտանիքների ու հենց իրենց ապրած ողբերգությունների մասին: Բացի այդ՝ կազմակերպվեցին նաև քննարկումներ կրոնի և ինքնության, թոռների թեմաներով: Ամբիոնից իրենց խոսքն ասելու հնարավորություն ունեցան նաև Դերսիմի հայերի միության նախագահ Միրան Փրզիչ Գյուլթեքինը և համընցիների «Հադիզ» մշակութային միության փոխնախագահ Հիքմեթ Աքչիչեքը:

Նախատեսվում է գիտաժողովում կարդացված զեկուցումներն ապագայում հրատարակել թուրքերեն և անգլերեն:

Գիտաժողովին անդրադարձան ոչ միայն Ստամբուլի հայկական թերթերը՝ «Ակոսը», «Մարմարան», այլև թուրքական մի շարք թերթեր ու հեռուստատեսիվներ, որոնք իրենց գնահատականներում գուսպ էին և հավասարակշիռ:

Վերջում ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի կազմակերպիչներին՝ հյուրընկալության բարձր մակարդակի համար: Այդ է վկայում նաև այն, որ 3 օրերի ընթացքում սադրիչ միջադեպեր չեղան և բոլոր մասնակիցներն ու հյուրերը բարեկամաբար բաժանվեցին:

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ